

ՄԵԼԿ

Տարեկան դիմը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբարացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը ղաղ է առաօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լիարժեք:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խորանային քաղին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ Ախալցխայից: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Տեղեկութիւններ շա-
յատանից: Անդրա: Գերմանիա: Բոլորիա: Գրանիա: Նամակ Թիւրքիայից: Արտաքին լու-
րեր: — ՀՅՈՒԱԳԻՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՐՏԱՔԻՆ

Սեպտեմբերի 15

Ախալցխայի հասարակութեանը յայտնի է, որ
երբ 1876 թվականում, Յովհաննէս վանցեանին
երեցփոխան ընտրվելու հարց ծագեցաւ վան-
ցեանի բարեկամների կողմից, ժողովուրդի մեծ
մասը հակառակ էր այդ ընտրութեանը, վանցեա-
նի անձնական ապահովութիւն եւ կարողութիւն
չունենալուն պատճառով: Սրա համար պ. Յով-
հաննէս վանցեանը, որ մեծ ցանկութիւն ունէր
այդ պաշտօնը ստանալու, իր կողմից երաշխա-
ւոր ներկայացրեց պ. Յակոբ Սաղաթէլեանին,
որը եւ յանձն առաւ մէկին տասը վճարել՝ եթէ
վանցեանը վատնէ եկեղեցական գումարները
իր երեցփոխանութեան ժամանակ: Իբրեւ եկեղե-
ցու օրինակ տեղեկ էր այդ երաշխաւորութեան
թուղթը գրել տուին իրանց անունով նոյն թուա-
կանի հաշուաւարները՝ պ. պ. Սարգիս Գարոյեան-
ցը եւ Յովակիմ Գեղամեանցը, այնպէս որ՝ պ.
Յակոբ Սաղաթէլեանը պատասխանատու էր դը-
րանց առաջ եւ ոչ հասարակութեան: Բայց շատ
ափսոս, որ այդ թուղթը չը գտնվեցաւ ոչ հո-
գեւոր կառավարութեան եւ ոչ երեցփոխան վան-
ցեանի գործերում: Ինչպէս երևում է, վերոյի-
շեալ պատուէլի հաշուաւարները, երբ հրաժարա-
կան են տուել, այդ թուղթին էլ են հրաժարեց-
րել, որ դրանով պ. Յակոբ Սաղաթէլեանին էլ,
իրանց հետ չապագայ պատասխանատուութիւնից
ազատ պահեն... Դուք էրանք վաղուց դիտելի
որ վանցեանի երեցփոխանական գործունէու-
թիւնը այսպիսի խայտառակութեամբ պիտի վեր-
ջանար, որ այդպէս փախել են պատասխանա-
տուութիւնից: Մեծարգոյ կարապետ աղա Մու-
թաֆեանցը հաշուաւարաց ժողովի մէջ յայտնեց
որ այդ թուղթը այժմ գտնվում է Յովհաննէս ա-
ղա Գարոյեանեանի մօտ, ինքը տեսել է, կար-
գացել է եւ յոյս ունի որ կարելի է այդ թուղթը
ձեռք բերել: Մենք են, մենայայտ ենք, որ Յով-
հաննէս աղա Գարոյեանեանը, իբրեւ նախանձա-
խնդիր եկեղեցական շահերին, կը ներկայացնէ
այդ թուղթը հաշուաւարներին, իրան ինչ օգուտ
եթէ երկար պահէ կամ ոչնչացնէ:

Հարկաւոր եմ համարում յայտնել որ (Մշակ)
138 եւ 140 համարներում Ախալցխայի նամակնե-
րի հեղինակը ես չեմ, իղիւր է ինձ վրա կարծիք
տանել:

Խմբագիր տէր, խնդրում եմ հիւրընկալէք իմ
այս նամակը ձեր պատուական լրագրում:

Վահան Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԱՐՏԱՔԻՆ

Սեպտեմբերի 19

Սրանից երկու տարի առաջ մտադրութիւն
կար տեղւոյս հայոց գերեզմանատունը, որի
չուրջը հետզհետէ շինվում են քաղաքի տները,
պարսպապատել, որպէս զի անմաքրութիւններից
աղատ մնայ: Այդ մասին բաւականին աշխատե-
ցաւ Ստեփաննոս քահ. Դէմիրճօղլեանց, բայց
ափսոս որ նրա ձայնը մնաց ձայն բարբառոյ
յանապատի:

Մեր գերեզմանատունը այժմ մի քստմեկի
պատկեր է ներկայացնում, իւրաքանչիւր քայլի
վրա մարդկանց եւ անասուն կողովանքներ են

լցված, որովհետեւ հէնց այս տարի էլ այդ գե-
րեզմանատնից մի քանի սաժէն հեռու էր գը-
տնվում դրազմանների երկու գնդի բանակը,
որի վերնուրններից ոմանք աղբանոց էին շինել
այդտեղ: Գերեզմանատան կից դրազմանները
կապում էին գնդի ձիերը: Անձրեւի ջրերը լուա-
նալով այդ անմաքրութիւնները կուտակել են
նրանց գերեզմանների մէջ:

Պահանջել որ, ինչպէս Եւրոպայում սովորու-
թիւն կայ, գերեզման պարտեզներով, ձեռնիքնե-
րով դարձրան մեր գերեզմանները, ի հարկէ
չենք կարող առ այժմ, բայց միթէ մենք կարող
ենք մեր սրտի սիրելիները՝ մեր հայրերը, մայրերը,
եղբայրները եւ քույրերը թողնել այդպիսի ապա-
կանված տեղում:

Զեմ կարծում որ այդ բանի համար փող չը
հաւաքվի, եթէ ինքեցիկներն են լինեն:

Այսօր այստեղ վախճանվեցաւ քաղաքիս հա-
րուստներից մինը, խաչատուր աղա Գրիգորեան-
ցը, արդէն ծեր հասակում: Հանգուցեալը կտա-
կել է տեղւոյս երկսեռ ուսումնարաններին
հինգ հարիւր ռուբլի: Նրա վերջին կամքի
համաձայն այդ փողերով պէտք է առնվելին
արքունական սովոսարեր թղթեր եւ յանձնվելին
ուսումնարանների հոգաբարձութեանը, որոնց
մօտ դրանք մնալու են տաս տարի, իսկ տասը
տարուց յետոյ տուրիսի հետ գոյացած գումարով,
տեղիս երկսեռ հոգեւոր դպրոցներում պահվելու
են հանգուցեալի անունով աղքատ եւ որը մա-
նուկներ: Բացի դրանից հանգուցեալը կտակել
է յօգուտ տեղւոյս աղքատաց յիսուն ռուբլի:

Մեր քաղաքի սրկանները սկսել են այժմ մի
նոր տեսակ գողութիւն, նրանք տների պատու-
հանները բաց են անում եւ տան մէջ եղած իրե-
ղէները տանում են:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք պ. Ալեքսանդր Մէլք-Փայաչեան-
ցից 4 ռուբլ յօգուտ «Ժուրնալ դ'Օրիան» լրա-
գրի: Առավելագու փողերի հետ կանի 1112 ռուբլ
50 կոպէկ:

Ստացանք մեծ շնորհակալութեամբ բժիշկ Սո-
լոմոն Ամիրովից նրա հեղինակութիւնը ուսուցիչ
լեզուով «Замѣтки объ ошущеніяхъ и стра-
стяхъ» վերնագրով: Դա մի ժողովրդական գը-
րուածք է այն աղբիւրների մասին, որ ունեն
սեռական կրքերը մարդու առողջութեան վրա:
Գիրքը տպւած է Թիֆլիսում Մ. Վարդանեանի
եւ ընկ. տպարանում, ներկայ 1881 թվին: Տիպը
շատ մաքուր եւ գեղեցիկ է: Գիրք մի ռուբլ է եւ
ծախվում է յօգուտ այն դրամապիսի որ կաղմ-
վում է Կովկասեան Բժշկական ընկերութեան
մէջ թէ՛ առնաց եւ թէ՛ տեղական լեզուներով ժո-
ղովրդական գրքեր հրատարակելու համար: Նոյն
նպատակով կարգաց կրուածօրում, մի քանի ամիս
առաջ պ. Բաբայեանը իր դասախոսութիւնը: Պ.
Ամիրովի գիրքը շատ թեթեւ եւ գոյեական ոճով է
գրված եւ մեծ հետաքրքրութեամբ է կարդացվում:
Խորհուրդ ենք տալիս մեր հասարակութեանը
կարգաւ այդ գիրքը եւ վատ չէր լինի եթէ նա
թարգմանվէր եւ հայերէն լեզուով:

Սեպտեմբերի 21-ին Թիֆլիսի բժշկները մի
ճաշ տուցին գերմանացի հոգաւար պրոֆէսոր
Վիրխովին: Զաւր տրվեցաւ Թիֆլիսի ժողովա-
րանի այգիում: Երբ Վիրխով երկաց, բժշկները
նրան ձեռքերի վրա տարան մինչեւ ճաշելու տեղը:
Զաւր ժամանակ, շատ ճառեր խօսվեցան ի պա-
տիւ այն մարդու որ իր գիտական հետազոտու-
թիւններով անագին յեղափոխութիւն է գործել
բժշկական ժամանակակից վարդապետութեան
մէջ: Զաւրից մէկը կարգաց եւ բժիշկ Անդրէաս
Դանիէլեզեանց, որի մէջ նկարագրեց Վիրխո-
վի գործունէութիւնը եւ ցոյց տուց նրա նշանա-

կութիւնը գիտութեան մէջ: Իր ճառի վերջում պ.
Դանիէլեզեան այն միտքը յայտնեց, որ բաւական
է Վիրխովի Կովկաս գալը, որպէս զի ամբողջ լու-
սաւորված Եւրոպայի սկսի իր հայեացքը ուղղել
Կովկասի վրա: Վիրխովի եւ ուրիշ գիտնականնե-
րի մեզ մօտ գալը, առնաբանի կարծիքով, մի
գրաւական է մեզ համար որ հեռու չէ այն բաղ-
դաւոր ժամանակը, երբ կը հիմնվի մի համալսա-
րան Թիֆլիսում:

Մենք մեզ թող կը տանք մի նկատողութիւն
անել գիտնականներին տուած ճաշերի կարգադ-
րիչներին: Սեպտեմբերի 21-ին Վիրխովին ճաշ
տրվեցաւ բժշկների կողմից, իսկ հետեւալ օրը,
22-ին, հաջորդեալ էմիլի աշակերտները իրանց
յարգելի ուսուցչին մի ճաշկերպութ տուցին:
Բայց ինչպէս բժշկները, այնպէս էլ էմիլի աշա-
կերտները անընդունակ եղան առաջուց լաւ կար-
գադրել այդ հանգիստը ինչպէս: Բժշկնե-
րից միայն 60 մարդ էին ներկայ ի պատիւ Վիր-
խովի տուած ճաշին, նոյնպէս էմիլի աշակերտ-
ներից շատերը դրկեցան բաղդից իրանց ուսուց-
չին իրանց համակրութիւնը յայտնելու: Պատճա-
ռն այն էր, որ կարգադրիչները ոչ մի տեղ, ոչ մի
լրագրում մի երկու օր առաջ չը յայտարարեցին
այդ ճաշի մասին եւ չը յայտնեցին թէ ցանկա-
ցողները ում պիտի դիմեն: Փառք Աստուծու,
այժմ այն ժամանակները չեն, երբ Թիֆլիսում
կային միայն երկու շաբաթաթերթեր, այժմ կան
Թիֆլիսում երկու ուսու եւ երկու հայ ամենօրեայ
լրագիրներ եւ մի վրաց ամենօրեայ թերթ: Այժմ
ամեն օր կարելի է յայտարարել:

«Journal d'Orient» լրագրի 39 համարից ըսել-
աւոր տպվում է Ֆրանսերէն լեզուով Գրիգոր
Արծրունու դասախոսութիւնը «Փիւրբաց հայերի
տնտեսական դրութեան վրա»: Ֆրանսիական
լրագիրը խոստանում է, դասախոսութեան առ-
պագրութիւնից վերջ, իր դիտողութիւններն ա-
նել այդ գրութեան մասին:

Թուս լրագիրներում կարդում ենք, որ հոկ-
տեմբեր ամսի սկզբներում կուն լօրիս-Մէլքեօվ
սպասվում է Ս. Պետերբուրգում:

«Тифл. Объавл.» լրագրում կարդում ենք որ
Նիթի-Նիթիգորդի տօնավաճառը այս տարի շատ
աշուղ կերպով անցաւ եւ վերջացաւ: Դատ քիչ
է աննշան գումարի վէկսէլներ գտնողաւի ներ-
կայացվեցան: Տօնավաճառի շրջական գումարը
հասաւ մինչեւ 220 միլիօն ռուբլ: Մեր վաճա-
ռականները նշանաւոր գումարի այլ եւ այլ ապ-
րանքներ գնեցին:

Լրագիրները հաղորդում են որ մեծ պատին
թատրոնական ներկայացումներ Մօսկվայում եւ
Ս. Պետերբուրգում արգելված կը լինեն:

Մեր քաղաքը նոր եկած Ֆրանսիացի երգիչ-
ներէ եւ դերասաններ խաւարը վաղվանից սկը-
նում է իր ներկայացումները տալ Արծրունու
թատրոնում:

Շնորհակալութեամբ ստացանք Մօսկվայից,
պ. Թէլեթեանից նրա յօրինած «Первоначальная
практическая и систематическая народная
школа для ручной Гармоники.» Составилъ И.
Телетовъ. Տեղաւրի գիրք 1 ռուբլ է: Այդ մի
դասագիրք է սկզբնական եւ ժողովրդական ուս-
ման գարմօնիկա ասված երաժշտական գոր-
ծիքի վրա անելու համար:

Թիֆլիսի հնագիտական ժողովը վերջացաւ,
մեր գիտնական հիւրերը փոքր առ փոքր թող-
նում են մեր քաղաքը եւ Թիֆլիսը կրկին ընդու-
նել է իր առաջվայ, սովորական տեսքը: Մեր
բոլոր հիւրերից ամենաաղքատը կերպով ըն-

դունվել է մեր ամեն շրջաններում պրոֆէսոր
Բուրգով Վիրխով: Այդ տեսակ ընդունելութիւ-
նը ապացոյց է որ պրոֆէսորը մեծ ժողովրդա-
կանութիւն ունի ոչ թէ միայն Եւրոպայում,
բայց եւ հեռու Ասիայում: Եւ ճշմարիտ, հարկա-
ւոր է քիչ թէ շատ գրագետ մարդ լինել, Վիր-
խովի անունը լսած լինելու համար: Մեր հա-
սակի մարդիկ դեռ գիմնագիտում աշակերտ լի-
նելու ժամանակ, արդէն դիտել ենք նրա անունը:
Հարկաւոր չէ բժիշկ լինել լսած լինելու համար
որ Վիրխով իր աշխատութիւններով մի յեղա-
փոխութիւն է գործել բժշկական գիտութեան
մէջ, հարկաւոր չէ քաղաքական մարդ լինել,
լսած լինելու համար, որ Վիրխով Պրուսիայի
ազատամիտ եւ առաջադէմ կուսակցութեան պա-
րագլուխներից մէկն է եւ նրա պաշտպանութեանը
պարտական է ազատամիտ բազմաթիւ օրէնքների
իրագործումը: Գերմանիայում, հարկաւոր չէ ոչ
թէ միայն մի գիտնական, բայց եւ առհասարակ
մի կրթված մարդ լինել, իմանալու համար որ
Վիրխով պատկանում է ամենաարդիւնատես գիտ-
նական հմտութիւններ ունեցող հաղաբարտ ու-
սումնականների շարքին: Գեռ մանկութիւնից
մենք սովոր էինք միացնել մեր գաղափարի մէջ
գերմանական գիտութեան ամենանշանաւոր երեք
անունները. Հոմերոսը, Վիրխով եւ Հերմիտ: Թող
երեւելի գիտնականի մեր երկրի մէջ գալը մի բա-
րի նշան լինի մեզ համար, թող նրա միջոցով
քաղաքակիրթ աշխարհը եւ մեր երկրի վրա
աւելի եւ աւելի ուշադրութիւն դարձնի:
Յանկանանք որ մօտիկ ապագայում եւ մեր
հեռաւոր երկրից, Անդրկովկասը, դառնայ,
եթէ այդպէս կարելի է ասել, մեծ, համամարդ-
կային, գիտնական, կամ առհասարակ մտաւոր
լաթարաորիքով մի մաս: Մենք միացնում ենք
մեր ցանկութիւնը վերջին օրերում մեզ մօտ
յայտնված բոլոր միւս ցանկութիւնների հետ՝
մօտիկ ապագայում իրագործված տեսնել Թիֆլի-
սի մէջ մի համալսարան:

Շնորհակալութեամբ ստացանք պ. Յովհաննէս
Բիւրքեանից նրա ֆոտոգրաֆիական աննման
ժողովածու Անիի աւերակների: Ժողովածուն
արժէ 20 ռուբլ եւ բաղկացած է 40 ստէրէօսկո-
պիական պատկերներից: Անիի հռչակաւոր աւե-
րակները պէտք է ունեն մեր պաշտպանութեան,
բայց պ. Բիւրքեանի ֆոտոգրաֆիական աշխա-
տութիւնների մասին կանանք, որ շատ քիչ է
պատահում տեսնել այդ տեսակ մարդու եւ անա-
խալ ֆոտոգրաֆիաներ: Եւ այդ մեր կարծիքը չէ
միայն: Մենք առիթ ունեցանք ներկայ գտնվել
երբ պ. Բիւրքեանի ներկայացրեց իր ժողովա-
ծուն պրոֆէսոր Վիրխովին: Գիտնականը հիա-
ցած էր հայոց հոյակապ, փառաւոր եւ շնորհալի
ճարտարապետութիւնից եւ աւելացրեց նոյն իսկ
վերոյիշեալ խօսքերը. «Ինձ շատ հաջել է պա-
տահել տեսնել այդ տեսակ մարդու եւ անախալ
ֆոտոգրաֆիա»: Երբ հայոց հասարակութիւ-
նը ցոյց կը տայ իր համակրութիւնը Անիի աւե-
րակների նկարչին, առնելով նրա ժողովածուն,
որի ստեղծելու վրա պ. Բիւրքեանի անագին
անձնական ջանք, աշխատութիւն եւ դրամական
միջոցներ է գործ դրել:

Վրաց հասարակութիւնը վրդովվել է այն ճա-
ռից, որ արտասանել է պրոֆէսոր Սոլոմոն քա-
ղաքի կողմից հնագիտական ժողովին տուած
ճաշի ժամանակ: Վրացիները ասում էին թէ դա
անտախտութիւն էր Արաստանի մայրաքաղաքում
խօսել միմիայն հայերի վրա: Պրոֆէսորը այդ
գանգալները լսելով, տպել է մի նամակ «Ին-
քազ» լրագրում, որի մէջ բացատրում էր թէ
նոյն տեսակ ճառ նա ասեց Բուխարեստում վրա-
ցիների վերաբերութեամբ, իսկ այստեղ Թիֆլի-
սում, տեսնելով իր չորս կողմ հայերին, նա ուղ-
ղել է իր խօսքը դէպի հայերը:

Ստացանք «Ժողովրդական» լրագրի համար 4-րդը իստահակ Բուդղանեանցից: Առաջվայ փողերի հետ կանի 1116 բուրլ 50 կոպէկ:

«Кавказ» լրագրում յայտնված է որ վաղը, շաբաթ օր, 26-ին սեպտեմբերի, Արծրունու թատրոնում կայանալան թատրոնների արտիստ, պ. Բոգդանով կը մասնակցի ֆրանսիական խմբի ներկայացմանը: Պ. Բոգդանով կը պատմի պատկերներ ժողովրդական կեանքից և կերպէ կուպլետներ: Ֆրանսիական խումբը կերպէ և կը ներկայացնէ մի օպերէտ պ. Կէկէր-Շէնկի օրկէստրի մասնակցութեամբ:

Օդէսայի մէջ հրատարակվող «Одесский Листок» լրագիրը, որ կառավարութեան հրամանով արգելվեցաւ մի քանի ամսով, նորից թոյլտուութիւն ստացաւ հրատարակվելու և այդ թերթի համարները արդէն ստացվեցան թիֆլիսում:

Այս օրերս վախճանվեցու թիֆլիսի մէջ Անդրկովկասեան Պրիկազի կառավարիչ պ. Չայէկսկի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Հարստահարութեանց դարը նորոգեցաւ, ապահովութիւն չը մնաց Հայոց. ամեն Հայ իր զբաղումէն դադարած, իր տունը պահելու ստիպուած է. ժամանակը բռնութեան է. կառավարիչը լոկ ամանակաւոր, անտարբեր մ'է. բնաւ հոգը չէ քաղաքի վիճակը, որ օրէ ցօր վտանգաւոր կը լինի... Ցածոգի մարդիկներն իրենց մոլորաբնութեան ազատ ասպարէզ գտած են. հիմայ ըսելու է թէ՛ անբաղդ է Հայը, թշուառ է, կը հարստահարուի. ուսկից, բուն իսկ իրեն հայրենակիցներէն. ահա՛ այս ևս մեծ ապացոյց մ'է թէ՛ դեռ կը թու թիւն չէ մտած նոցա մէջ, քանի որ նախկին ռիսիկով վարակուած իրենց կատաղի կրից յաղեցում տալու համար ոտնակոխ կ'ընեն ամբողջ քաղաքի մը կացութիւնը և ազգի մը կենցաղավարութիւնը: Կը պատահին հոս, ի Մարաշ, դէպքեր, որ անուր են. կը գործուին ոճիրներ, զոր միայն միջին դարը կրցած է հնարել. հանգիստ կեանք, առեւտուր, իսպառ չը մնացին. ամեն մարդ, որ Հայ կը կոչուի իր տանը պահպանան է. խանութները փակուած, զի խանութին մէջ իսկ կը յարձակին նորա վրայ. արտերն ու այգիներն անխնամ, զի իրենց սեպհական կառուածին մէջ կը վիրաւորուին սրիկաներէն. վերջապէս անգթութիւնը, բռնութիւնը, հարստահարութիւնը օր ըստ օրէ կ'աճին և կը սպառնան հանգստութեան. այս ամեն ոճիրներէն միայն մէկ հատը, որուն նման 20 տարիէ ի վեր չէր տեսնուած հոս, պատմել հարկ կը համարվիմք հասարակութեան:

Մօտերս, քաղաքիս Բիւսպէթ կոչուած թաղին մէջ, Կ. Հ. վարժարանի դասատուներէն Պ. Ս. Սամուէլեանի տունը՝ գիշերատուն մեծ յարձակում մը կը կրէ Տիվանլը թաղի մոլորանդ, սրիկայ, հայտատեաց 200 էն աւելի մարդիկներէն, որ երկու օր յառաջ համահաճ հաւանութեամբ և խորհրդով որոշած էին ջնջել այս ընտանիքը, զոր կը հարուածեն և կարատաւորեն անհաւատալի զրպարտութեամբ: Կուրը կը սկսի գիշերը ժամը մէկ ու կէսին մօտերը, մինչդեռ ընտանիքը նստած, կը խօսակցէին: Նախ մի քանի Տաճիկ սրիկաներ ստնդուխէն վեր կ'ընէին թշնամական շարժումներ կը ցուցնեն սոցա. առիթ մը կը փնտռեն իրենց թոյնը թափելու: Պ. Ս. Սամուէլեան կը ջանայ խաղաղութեամբ զրկել զայնս, սակայն չը յաջողիր, և վերջապէս այս միջոցին 15—20 սրիկայ ևս զինուած, նախա-

պատրաստական դիրքով՝ կատաղութեամբ կը յարձակին տանը վրայ. յարձակեցող խուժանը կ'աւելնայ. խուռն ամբոխ մ'է, տունը կը պաշարէ. թշուառ ընտանիքն ահառ դողի բռնուած. հարսերէն մին ևս յղի լինելով՝ սարսափահար կը մարի. կուրն երթալով ահեղ կերպարանք մը կ'առնու. թշուառ դաստառուն թեւը սոսկալի հարուածէ մը կը վտանգի. աչքը կը փնտռուի գլխուն տրուած հարուածներուն պատճառաւ. այս միջոցին տան տէրը ոտիկանաց լուր կ'ընէ, մինչդեռ այնքան վայրագ ամբուր մոլորանքաւոր կը գոչէ. «աթէշ կէթի» ընէ, կեանքը լարւած մալը վէ ըրզը պիզէ հալալ տըր՝. ամբոխին գլուխն է Տաճիկաց կրօնական իւլէ մահ երէն Նայրանտ օղլու Ահմէտ էֆէնտին. կը հասնին ոտիկանք, բայց մէկ մարդ չերկիր. ամենն ալ տանը քովի բաց անցքէն փախած էին, և միայն տանտէրն իր եղբայրներով և զաւակներովը գտնուելով տանը մէջ, զայնադամի հրամանաւ գիշերով կը բռնեն զայն ոտիկանք և այսպէս դաստառուն, երկու եղբայրները, զբացի Պիլէգիլիճեան խաչէր անուն անձը տանը մէջէն բռնի հանելով կը տանին պալատն ի բանտ. և գիշերը հոս կը մնան միմիայն, ինչպէս ըսած է զայնադամը, ամբոխին կատաղութիւնը սանձելու կամ նոցա հաճոյքն յաղեցնելու համար, այսպէս ահա կը հսկեն բանտին խորերը՝ վարժապետ, անպարտ եղբայրներն և այլ Հայեր, որոց յանցանքը միմիայն ծեծ ուտելն և Հայ լինելն է. յաջորդ օրը յիշեալ սրիկաներէն երկու հոգի կը բռնեն, և բանտ կը դնեն, բայց փաշային հրամանաւ իսկոյն կարճալովն, իսկ Հայք դեռ կը պահեն բանտը. յատկապէս խնդրագիր կը տրուի, բայց ո՞վ կայ լսող. յայտնի յանդիման ամեն մարդ գիտէ որ այս եղբայրները խորհրդով կատարուեցաւ, պարզ իրողութիւն մը չէ, խնդրագրով լինելով գործ չէ. դասատու մը յանդիման բանտարկել, տուն մը թշուառ և անտէր. ահա դեռ նոր շնորհիւ երաշխաւորի մը դասատուն արձակեցաւ և այլք. բայց մեծ եղբայրը դեռ բանտն է, հակառակ օրինաց. խնդրագիրը նկատի չառնուի, առանց դատ վարկու, ամեն տեսակ տանջանքներ կուտան. կառավարիչը, որ կուպիտ և սաստկաբարոյ մէկն է, այս ամեն իրողութեանց ականջը կը խցէ, և կարծես թէ կուրսխանայ, և չը թողուր որ այն բանտարկեալ Հայն հանուի բանտէն մինչև դատի լրանալը, ըսելով թէ՛ «պոլստան պիւր պէտլիւք ֆէստա շըգար»՝. իբր թէ՛ Հայուն մը բանտէն արձակուիլը պատճառ պիտի լինի նոր խուռովութեան մը. երբէք խնամ չը տանիր քաղաքին, ազգը մեծապէս դժգոհ է իւր վարժուէքէն. ահա օրէ ցօր կը բազմանան եղբունազորութիւնը ի շնորհս կառավարչի անտարբերութեան և հայատեցութեան. մինչդեռ մեր բարեխնամ տէրութեան Օգոստ. Սուլթանն հաւատարութեան, եղբայրարութեան և խաղաղութեան կանոնները գործադրուած տեսնել կը ջանայ իր երկիրներուն մէջ, ընդհակառակն այսպիսի բարեկարգութեան թշնամի կառավարիչ մը տեղի կուտայ ամեն տեսակ ոճիրներու, որ անպատիւ կը գործուին ամեն օր:

(Մանուէլի էֆէնտին)

ԱՆԳԼԻԱ

Գուրլինի մէջ իրանդական ազգային կոնվենտի երկրորդ նիստի ժամանակ, որ նոյնքան բազմամարդ էր որքան և առաջինը, Սեկստոն յայտնեց, թէ կառուածական միութիւնը

թիւնը „Irish World“ լրագրի խմբագրութեանց ստացաւ 30,000 ֆրանկ հետեւեալ նամակի հետ. «Յանուն շղթայակապ Կիլլիտի, յանուն ապագայ սերունդի, որի վիճակը ձեռքին է, յանուն արդարութեան, մարդասիրութեան և իրանդիայի բարօրութեան, խնդրում ենք ազգային կոնվենտից գրել իր զրօշալի վրա. «չը վճարել կալուածական տուրքերը, մնալ իրանց տներին մէջ: Արեք այդ և ամերիկական ձեր բարեկամները կը կրկնապատկեն իրանց օգնութիւնը: Հակառակ դէպքում Ամերիկան ամօթով կը մնայ:» Կալուածական միութեան Բատօնի բաժնի հաւատարմատար Կիլլիտի էգոն ասաց, որ Գուրլինի կոնվենտը միտմամբ է իրանդական ապագայ պարլամենտի համար: Նա յոյս ունի, որ իրանդացիք չեն հանգստանայ, մինչև արմատախիլ չանեն անգլիական իշխանութիւնը իրանց երկրի մէջ: Ամբողջ ժողովը երեք անգամ ծափահարելով և ոտքի կանգնած ողջունեց իրանդական ապագայ հանրապետութեան զաղափարը: Կոնվենտը արդէն վերջացրել է իր նիստերը:

Իրանդական գործերի միւստր ֆորստեր Կլաքստօնին այցելելուց յետոյ ուղեւորվեցաւ Գուրլին: Այնտեղ նրան ներկայացաւ իրանդացի ամենաշափաւոր երկրագործներէն մի պատգամաւորութիւն, որ խնդրեց ներուստի շնորհել բոլոր կայանաւորվածներին, որոնց թուում է իրանդական միութեան առաջնորդ Կիլլիտին: Ֆորստեր մերժեց այդ խնդրը, պատճառ բերելով, թէ իրանդիայի մէջ անկարգութիւնները և բռնութիւնները չեն դադարում:

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանական ազգային ազատամիտ կուսակցութիւնը նորերում հրատարակեց իր նախագիծը, որի նպատակն է միացնել գերմանական հասարակութեան բոլոր ազատամիտ ասարները: Գերմանական ազատամիտ մամուլը վաղուց քարոզում է, որ անհրաժեշտ է ընդգրկմադրական փոքր կուսակցութիւններին միանալ ընդհանուր ոյժերով գործելու համար: Այդ պատճառով նոր նախագիծը այնքան անորոշ է կազմված, որ կարող է միատեսակ հաճելի լինել թէ ազատամիտներին և թէ առաջադէմներին: Օրվայ նշանաւոր խնդիրների մասին նոր նախագիծը ոչինչ չէ նկատում կամ հարեանցի ակնարկութիւններ է անում:—Այդպիսի անորոշութիւնը չէ կարող վերջացնել ներքին անհամաձայնութիւնները և այդ պատճառով Բեռլինի պարլամենտական կուսակցութիւնը հազիւ թէ կը կարողանայ բարեօրէն իր գրութիւնը: Գիտակցական և գործունեայ ընդգրկմադրական կուսակցութեան համար ամենից առաջ հարկաւոր է որոշ և հաստատ սկզբունքներ: Մանաւանդ նրանք այժմ անհրաժեշտ են իշխան Բիսմարկի պետական քաղաքականութեան դէմ մաքառելու համար: Պետական կանցլերը ժողովրդին մի շարք տրեստական նշանաւոր փրանսորդութիւններ է առաջարկում: Ինչպիսի ուղղութիւն և յատկութիւն էլ ունենան այդ փրանսորդութիւնները, գերմանական ժողովրդի շահերի տեսակէտից նայելով գործին, բնական չէ նրանց քննել և բացատրել: Մինչդեռ պրուսական ազգային-ազատամիտ կուսակցութիւնը միշտ հէնց այդ պակասութիւնն է ունեցել և այժմեան նախագիծով ազատամիտները այդ պակասութիւնը ընդհանուր սկզբունք են դրանում: Ապագայ ընտրութիւնները կապացուցանեն, որ այդպիսի անորոշ նախագիծները և գործունէութիւնը նպատակայայտմար չեն:

Կիսի անորոշ նախագիծները և գործունէութիւնը նպատակայայտմար չեն:

Շլէզերի ճանապարհորդութեան մասին լրագիրները հաղորդում են հետեւեալը: Նա մի նկարչի հետ Հոօմը այցելեց իբրև հասարակ ճանապարհորդ և այնուհետև գնաց Վատիկան իբրև գերմանական կառավարութեան հաւատարմատար: Նա առաջարկեց պապին, որ գերմանական դեսպան նշանակվի Վատիկանի մէջ և մի քանի աքսորված եպիսկոպոսներին թոյլ տուեց Գերմանիա վերադառնալ: Կեռյայտնի չէ, թէ այդ զիջումներն փոխարէն Շլէզերի ինչ է պահանջել պապից: Վատիկանի „Vocedella Verita“ լրագիրը նկատում է, որ զլուսւոր հարցերից դեռ ևս ոչ մէկը վճռված չէ: Այդ հարցերի ընտելութիւնը յետաձգված է մինչև գերմանական դեսպանի նշանակելը պապական կառավարութեան մօտ: Թէ պապը և թէ Շլէզեր բաւական են մնացել իրանց խօսակցութիւնից: Շատերը հաւատացնում են, որ Շլէզեր, զիջումներ անելով, նրանց տեղ ոչինչ չէ ստացել:

Գերմանական լրագիրները հաստատում են տարածված լուրերը, իբր թէ նորից բանակցութիւններ են սկսվել այն յանցաւորներին յանձնելու մասին, որոնք փորձել են սպանել զանազան պետութիւնների կառավարիչներին: Ինչպէս յայտնի է այդ բանակցութիւնները սկսվեցան դեռ անցեալ դարնալը, բայց այն ժամանակ ֆրանսիան և Անգլիան անուղղակի պատասխան տուին իշխան Բիսմարկի պաշտպանած ռուսական շրջաբերականին այդ հարցի առիթով: Այժմ հարցը նորից բարձրացրած է և աշխատում են համաձայնութիւն կայացնել պետութիւնների մէջ: Ֆրանսիայի և Անգլիայի օգնութեանից չեն հրաժարվել, բայց առանց այդ երկու պետութիւնների էլ միևնույն կաշխատանք փոխել այժմեան դաշնագրութիւնները այդ առարկայի վերաբերութեամբ:

ԲՕԼԳԱՐԻԱ

Սօֆիայի մէջ արդէն հիմնված է բոլգաւական պետական խորհուրդը: Նրա կազմակերպութեան ժամանակ առաջացան այն բոլոր դժուարութիւնները, որոնց դէմ կառավարութիւնը պէտք է մաքառէ, և գործն էլ շատ առաջ չը կարողացաւ գնալ: Կառավարութիւնը որոշեց միայն, որ պետական խորհրդի անդամների թիւը 12 պէտք է լինի: Իշխան Ալեքսանդր սոֆիական է մեծ զգուշութեամբ գործել հերթական հարցերը վճռելու ժամանակ: Պահպանողականների մէջ, որոնք առաջ նրա կողմնակիցներ էին, անբաւականութիւն է նկատվում և մամուլն էլ ուշադրութիւն է դարձնում այդ հանգամանքի վրա: «Народный Гласъ» լրագիրը պահանջում է, որ կառավարութիւնը կատարէ սահմանադրութիւնը ոչնչն չացնելու ժամանակ իր տուած խոստմունքները և որ վերջապէս վերանորոգէ երկրի վարչութեան զանազան բաժինները: Բուլգուկի մէջ հրատարակվող «България» լրագիրը պակասարկում է կառավարութեանը երկաթուղիները առանց մրցման ռուսների ձեռքը գցելու համար: Այսպիսով ազգաբնակչութեան մէջ ռուսների համար թշնամական տրամադրութիւն է նկատվում: Բոլգարները կասկածանքով նայում են վարչական պաշտօնեաների փոփոխութեան վրա: Պահպանողականները յիշեցնում են կառավարութեանը իրանց մատուցած ծառայութիւնները վերջին դժուարութիւնների ժամանակ և զանգատվում են, որ բաւական վար-

ձառնարկով և Գերմանական լրագրիչների տեղեկութիւնների համեմատ Բոլշակովայի ներքին գրութիւնը չափազանց վատ է:

ՅՈՒՆԻՍԿՈՒ

Պատգամաւորների շրջաններում մեծ անհանգստութիւն է տիրում Տունիսի գործերի գրութեան պատճառով: Պատգամաւորներից շատերը պահանջում են, որ լաւ քննվեն Տունիսի դժուարութիւնների պատճառները, որովհետեւ պաշտօնական տեղեկութիւնները չափազանց անորոշ են: Միւս պատգամաւորները մտաւիր են մի գրութիւն ներկայացնել հանրապետութեան նախագահին, խնդրելով պատգամաւորների ժողովի բացումը շտապեցնել:

Պատգամաւորների միւսիստր Ֆարրի շրջաբերականը 1876 թուին հաւաքված զինուորական հրահանգի տակ պահելու և Աֆրիկայում գործող զորքերի պակասորդը ներանցով լրացնելու մասին մեծ աղմուկ պատճառեց, որովհետեւ միւսիստրութիւնը շատ անգամ յայտնել էր, թէ զորախաղերից յետոյ այդ զինուորները կարձակվեն: Այդ առիթով միւսիստրների խորհուրդը կայացաւ, որի ժամանակ Ֆարրին պախարակեցին այդ կարգադրութեան համար, որ անպատուութիւն է բերում կառավարութեանը: Ֆարր պատասխանել է, որ իր կարգադրութիւնը չէ կարող փոխել: Նրան առաջարկել են միւս անգամ այդպիսի կարգադրութիւն չանել առանց միւս միւսիստրների համաձայնութեան: Այնուհետեւ բուստան ներկայացրեց խորհուրդին իր հաշիւը Տունիսի գործերի գրութեան մասին: Նա ասաց, որ ամեն բան լաւ կը լինէր, եթէ նրա խորհուրդներին հետեւէին և անդադար չը փոփոխէին պատերազմական գործողութիւնների նախագիծերը: Նրա պահանջը Տունիսը Ֆրանսիական զօրքերով գրաւելու մասին չը կատարվեցաւ: Այժմ անհրաժեշտ է 25,000 զօրք ուղարկել հիւսիսային Աֆրիկա: Հինգ շաբաթվայ մէջ ամեն բան վերջացած կը լինի, եթէ Ֆրանսիացիք անյապաղ կարշաւեն Կայրուան քաղաքի վրա: Միւսիստրների խորհուրդը պատուիրեց բուստանին անյապաղ Տունիս վերադառնալ և մի քանի վճիռներ կայացրեց, որոնք գաղտնի են պահվում:

Տունիսը նուաձեւում համար պէտք եղած պատերազմական ծախսերը 150 միլիոն ֆրանկի են հասնում: Բուստան քաղաքակալայնում է, որ Տունիսի արշաւանքը առեւտրական նպատակներ ունէր, ինչպէս Անգլիան պատերազմում է առեւտրական նոր կենտրոններ ունենալու համար: Փարիզի մէջ ամենքը համոզված են, որ Տունիսի ապստամբութիւնը նուաձեւում համար գնեա 100,000 զօրք է հարկաւոր: Մինչև այդքան զօրքեր կուղարկվեն, Տունիսի մէջ եղած զինուորները հազիւ կարողանում են հսկել, որ մայրաքաղաքը ջուր ունենայ, որովհետեւ արաբները ջրանցքները և աղբիւրները փչացրել են: Կայրուան քաղաքը պաշտպանելու համար ամեն տեղից արաբական ցեղեր են հաւաքվում, որովհետեւ ժողովրդական համոզման համեմատ այդ քաղաքի ջրհորը յարաբերութիւն ունի Մեկկայի սրբազան ջրհորի հետ: Արաբները յամառութեամբ կը պաշտպանեն այդ քաղաքը, հեռեւապէս Ֆրանսիացիների արշաւանքը այդ քաղաքի վրա բաւական նշանակութիւն գործ կը լինի:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՅԻՑԻՑ

Կ. Պոլսի, 10 սեպտեմբերի

Ներկա լսած էք պ. Յովսէփ Գալաֆեանի անունը. սա նա է, որը մի տարի առաջ արտօնութիւն տալու թիւրքաց տէրութիւնից վանի լծի վրա փոքրիկ շողանաւեր բանացնելու համար լծի շրջակայ գիւղերի և փոքրիկ քաղաքների հաղորդակցութիւնները հեշտացնելու և միմեանց հետ կապելու նպատակով: Բայց վրահասաւ սովը, իբրեւոք լրացի արշաւանքը, հայոց խնդրի ճշգրտութեամբ և պ. Գալաֆեանի գործը մնաց յետաձգութեան մէջ:

Վաղուց արդէն մտաւիր էի այցելել այդ պառնի իրան ձեռքով կառուցած նաւաշինութեան գործարանը և շողեշարժ աղբիւրները Բոսֆորի ափում: Վերջապէս ներկայացաւ պատեհ առիթ. յիշեալ պարոնի այգիական և Միացեալ ընկերութեան առեւտրային պ. Յովհաննէս Արշակունի սիրավիր գանձեցաւ առաջարկել անցեալ օր իր ընկերակցութիւնը Գալաֆեանի գործարանները այցելելու համար: Նաեւ ինքն իր սրահը Բոսֆորի վրայով դէպի խաւ-քէօյի և Ոսկեղջիւրի նեղուցը. կէս ճանապարհին կանգնեցինք մի յարկանդամ և առաջ մարդու մօտ, որը ափում կանգնած բարեկց մտերմաբար իմ ընկերիս: Նաեւ կը մօտեցաւ նորան. դա ինքը պ. Գալաֆեանն էր իր գործարանի մէջ:

Մօտ մի ժամ շրջելուց և ամեն ինչ տեսնելուց յետո, բնական կերպով հարցրի պ. Արշակունից զիստաւ մեքենայագէտի մասին, որը չէր երևում գործարանի մէջ. ինձ ասեցին, որ մեքենայագէտը ինքը գործարանատէրն է. կարող էք երեսակայեւ դարմանալ, երբ առաջին կանգնած էր մի մարդ, որը բացի հայերէնից և թիւրքերէնից ուրիշ ոչ մի լեզու չը գիտէր և մի քանի անգլիացի գործաւորներին հետ միասին թարգմանի միջոցով էր խօսում: Բնական է, որ չը կարողացայ մի բան հասկանալ, բայց պ. Արշակունին ժպտով նկատեց զիսի պանտալոնով. չէր դարմանաւ, այս, յիշեալ զարմանալի է, բայց յետոյ կը պատմեմ:

Ամեն ինչ տեսնելուց յետ մակոյկ նստած գրեցինք թիւ հեռու, ուր գործաւորները միջին պէս աշխատում էին մի մեծ նաւի կառուցման վրա. գործը դեռ բոլորովին նոր էր սկսված և նաւի միայն կմալքն էր սարքած. գործաւորների վրա կանգնած էր, ինչպէս մասնագէտ պ. Գալաֆեանին նմանող մի յարկանդամ և քաջ աչքերով ինչ անհոգ և ամեն ինչ տեսնելուց յետ, նստեցինք նաեւ տուր վերադառնալու համար:

«Հաւանեցիք» եղաւ սիրելի ընկերիս հարցմունքը:—Անտարակոյս շատ հաճելի էր տեսնել Կ. Պոլսի մէջ միակ մի այսպիսի մասնաւոր գործարան, որի տէրը հայ է, բայց, ասեցիք ինչո՞ւ, ինչու բացի ստորակարգ մշակութիւնից չը տեսնեք ոչ միայն իստ և ոչ ինժեներ:—Ամեն բան ինքն է և իր որդին, ասեց ընկերս և սկսեց պատմել ինչպէս այդ հանձնարել մարդը միանգամայն գործնական կերպով և ինքն իրան այնչափ յառաջացել է մեքենայագիտութեան և նաւաշինութեան մէջ, որ սկսելով հասարակ ջրաղացաշինութիւնից նա հասել է հիմա այնտեղ, որ տարուայ ընթացքում երեք-չորս շողեշարժ նաւեր կը կառուցանեն և կը ծախեն նոյն իրանց եւրօպական ընկերութիւններին: Ես տեսայ նորա մօտ և առեսաց դեպքանաւան համար շինողը և նոր սկսած մի փոքրիկ շողեշարժ: Պ. Արշակունին մէկ մէկ յիշեց այն նաւերի առեւտրի մասին, որոնք նախապատիւ են համարել պ. Գալաֆեանին նաւ շինել տալ և նորանից առնել, քան թէ բերել տալ Անգլիայից, Այս ամենի վարձատրութիւնը, ի հարկէ բացի անծաքանակ աշխատանքից պ. Գալաֆեանն ունէ և այն վարձատրութիւն, որ իր վաճառելի բոլոր նաւերը և նաւակները նա պիտի անպատճառ կնքէ, վասնորոյ Արշակունին մօտեցրեց ինձ Բոսֆորի վրա ձեռնվող մի երկու նաւակներին, որոնցից մէկի անունը «Արաքս» էր, միւսինը «Արարատ»:

Այդ ամենը տեսնելուց յետ ակամայից թանաջ քաջերի, զայրոյթով միտ բերելով թէ՛ որչափ անարդար են դէպի հայերը շատ անարդարօտարներ, որոնք արհամարհելով հայի երկրագործական, գիւնդրական և արուեստասիրական հակում-

ները և ձիրքը, մի քանի անգամ անհաւանաներին պատահելով անգլանալի կերպով գողափար են կազմում թէ հայոց աղքատ միայն չար չին երեց և բաղկացած: Որչափ մեղաւարդ է և ծանր մեր աղբի համար մի այսպէս յամառ աննպատակ կարծիք թէկուզ հենց ըմբռնութիւն և վատերի կողմից. հայ երիտասարդութեան պարտքն է այս նախապաշարմունքը կոտորել օտարների մէջ, փառք Աստուծու, մենք ունենք այժմ մեր սեփական օրգանը եւրօպայի մէջ...

Աւելորդ չեմ համարում հետեւել հետաքրքիր բանը պատմել, որ կարգացի պ. Յարութիւն Քէշկեանի Հալէբից ստացած մի նամակի մէջ. Հալէբիցի մի հայ կոչակար լսելով լրագրիչներից մի հարուստ յորդի նշանակած պրէմիայի համար, ով կը շինէ մի ջուխտ բոսֆորտ, բայց առանց մի հատ ասեղակալի, նամակ է գրում նորան թէ ինքը կը պատրաստէ այդ: Ինչպէս տեսնում էք տարօրինակ անգլիացու առաջարկած բանը միանգամայն մի հանելուկ է, որը յանձն է առնում սակայն հայ կոչակարը լուծել: Եւ ինչ էք կարծում. կարող էք գուշակել թէ ինչ միջոցի է դիմում հնարամիտ հայ արհեստաւորը. մի քանի ոսկիով նա գնում է Հալէբում մի փոքրիկ ուղար ձագ, մորթում է նորան, ծախում միւսը և կաշին, իսկ չորս ոտերը կտրում մինչև ծունկերը առանց կաշիին դիպելու: Գետոյ ամենայն զգուշութեամբ հանում է ոտերից յետ ծախելով կաշին և ստանում է այդպիսով երկու ջուխտ անկար բոսֆորտացու դեռ վերջնականապէս չը պատրաստած: Գիտե՞ք որ ուղարի ոտի թաթերը այնչափ փափուկ են լինում, որչափ կոշիկի տակ, կոշակաւորն էլ այդպէս է յարմարացնում. ջրի մէջ կակղացնելով, յետոյ չորացնելով, ձգձգելով ու փայտով թափելով մի ամալայ մէջ այնտեղ է հասցնում իր գործը, որ ստացվում է բոլորովին եւրօպական ձևի երկու ջուխտ ներկած կրօնկաւոր և բեռնած բոսֆորտներ, որի համար ստանում է իր երեք հարկի ֆունտ տուրքինց պրէմիան և կոչակարութիւնը դէն գցած, հիմա սկսել է վաճառականութեամբ պարագլել: Ասում են որ իր պատրաստած կոշիկները մէկ ջուխտ ուղարկելով ում հարկն է, միւս ջուխտը պահում է իր մօտ, որ միշտ տեսնէ նորան ու յիշէ ինչպէս սկիզբ իր բաղդաւորութեան: Ինչպէս տեսնում էք բանը շատ հեշտ կատարել է եղել, սակայն նմանելով այն հեշտութեան, որով Կոլորադոյ կանգնացրել է ձուն զլիսի վրա Ամերիկայի գիւտի հեշտութեան վրա ծիծաղողի հետ վիճելիս: Ահա այսպէս է և պ. Գալաֆեանի ձիրքը արուեստագիտութեան մէջ. այսպէս է և հայ աղբի մէջ դեռ չը մարված արուեստի և արհեստի չնորքը, որի վրա սակայն ոչ ոք չէ ուղում մտածել, այլ նաև ծիծաղում են, երբ յամառութեամբ ասում են նոցա թէ՛ հայ աղքատ փրկողը եղել է երկրագործի և արհեստաւորի տոկոսութիւնը, այլ ոչ ուրիշ բան, նաև կրօնը: Մտածե՞մ են արդեօք Կովկասի հայերը իրանց ուսումնարաններին արուեստագիտական ուղղութիւն տալու վրա. Տէր մի արասցէ. Կովկասի հայերին հարկաւոր է, որ նոցա որդիք կօկարդ ունենան ճակատին և չինձիւնի լինեն, ինչպէս որ Կ. Պոլսի հայերն էլ ձգտում են միայն նորան, որ իրանց որդիք գէթ կարողանան ճառել խօսել և որչափ կարելի է շատ իմանան եւրօպական վիպասանների անուններ. լաւ յառաջադիմութեան նշան է, Աստուած չար աչքից պահէ...

Այս վայրկեանս յոյց տուեցին ինձ սեպտեմբեր ամսվայ «Փարոսը» որի մէջ ենթագրութիւն էր արած թէ Մշակի խմբագրութիւնը չէ ընդունում իր Կ. Պոլսի թղթակցից դիտողութիւններ ի նպաստ «Փարոսի»: Հետաքրքիր է իմանալ որ տեղից է վեր առել այսպիսի մի բան:

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Times» լրագրին ժընձից հեռագրում են, սեպտեմբերի 22-ին, որ մի քանի օր առաջ Լուր տարածվեցաւ, թէ Մոսկու-Բրեսլու, Լոզանօ մօտ, կալանաւորեցին մի քանի իտալացիներին, որոնց թւում և պ. Կաֆֆերօն: Սկզբից կալանաւորելու պատճառը ծածկում էին, բայց այժմ յայտնվում է, որ կալանաւորվածներին կանկաղաւորութեան մէջ: Կաֆֆերօն և իր քարտուղարը դեռ ևս բանտարկված են, իսկ մնացած իտալացիները արտասահման են աքսորված:

Կաֆֆերօն առաջ լաւ դրութիւն ունէր հասարակութեան մէջ և մեծ կարողութեան տէր էր, բայց այդ բոլորը սօցիալիզմի պրօպագանդայի վրա գործ դրեց: Այժմ նա հասարակ գործաւորի պէս է ապրում:

—Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ, ներկայումս Տունիսում գտնված ֆրանսիական բոլոր զօրքերի թիւը հասնում է օֆիցիրներ 1,005, զինուորներ 33,600, ծխաներ 3,350, եղաներ 3,250: Այս օրերում զինուորներին նորից 5000 մարդ ևս կաւելանայ:

—«Բէյութի» ընկերութեանը սեպտեմբերի 22-ից, Վաշինգտոնից հեռագրում են, որ Միացեալ-Նահանգների հանգուցեալ նախագահի դադարը զարդարող պսակների մէջ աչքի է ընկնում թէ իր մեծութեամբ և թէ գեղեցկութեամբ անգլիական թագուհու կողմից ուղարկած պսակը, որը դրեւ է բրիտանական դեսպանատունը: Պսակի վրա հետեւալ վերնագիր կայ. Վիկտորիա թագուհի ի յիշատակ հանգուցեալ նախագահ Գարֆիլդի, որպէս նշան իր տրամութեան և համակրութեան դէպի տիկին Գարֆիլդ և ամերիկական ամբողջ ժողովուրդը: Ստորագրութիւնը յօդուտ տիկին Գարֆիլդի հասաւ 267,000 զօլլարի:

—Լրագրիչները հաղորդում են որ սօցիալիստները դարձեալ դիտաւորութիւն ունեն հաւաքել սօցիալիստների կոնգրէս Ֆիրիլիում: Բերնի վրա նրանք, ինչպէս երևում է, երեք չէին նայում որպէս մի կէտի վրա, որտեղ միջոց կունենան գումարվել:

—Կ. Պոլսի մէջ հրատարակող Ֆրանսիական «Stamboul» լրագրում կարգում ենք հետեւեալը: «Մի շատ տարածված լուրի հիման վրա մեծ պետութիւնների դեսպանները այս շաբաթվայ ընթացքում սկսելու են վճռողական քայլեր առնել Բ. Գրան առջև, որպէս զի պահանջներ նրանից անյապաղ կատարուեն Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի, որ վերաբերվում է Հայաստանի ընթացիկներին:

—Վիեննայի բանկիր, քարօն Հիբը նուիրեց մի միլիոն ֆրանկ ուսու հրէաներին Ամերիկա նրանց գաղթելու գործին նպատակելու համար: —Լրագրիչներին հաղորդում են Հռօմից: Լսվում է, թէ կարգիւնայնիցի ժողովը քննութեանը առաջարկված է հետեւալ հարցը. պարտաւոր է արդեօք պապը առաջին պատահած յարմար օրակէն հեռանալ Հռօմից, թէ պէտք է նոր բռնութիւններին սպասի, որոնք կը ստիպեն նրան թողնել Հռօմը: Եւրօպական միապետները դեռ ևս իրանց մէջ համաձայնութիւն չեն կայացրել պապի ապագայ դրութեան մասին. միայն ասում են, որ Մալտա կղզին զաղթելու դիտաւորութիւնը թողված է: Երկու լուր կը կրում, որ ծովային ճանապարհորդութեան անհրաժեշտութիւնը շատ կը սահմանափակի այն ուխտաւորների թիւը, որոնք դալիս են երկրպագելու պապին, և բացի դրանից Մալտան բողոքական պետութեանն է պատկանում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 սեպտեմբերի: «НОВОСТЕ» լրագիրը հաղորդում է, որ երեկ թագաւոր Կայսրը, թագուհու, թագաժառանգի և Մեծ Իշխան Ալեկսէյ Ալեկսանդրովիչի ներկայութեամբ նաւախաղ կատարեց Մեծ Ովկիանոսից վերադարձած նաւերին: Այսօր ներկայանում են թագաւորին խմբիչների և զաղթականական մասնաժողովների Էկսպերտները, նոյնպէս Նիժնեգօ-րօզիսկայա տօնավաճառի առեւտրականների պատգամաւորութիւնը: Կոմս Իդնաուիկ ընդունեց Էկսպերտներին սեպտեմբերի 20-ին, իսկ պատգամաւորութեանը երեկ: Նորից սահմանափակված են շտապեր, երկրորդ բաժինը միացնվում է պետական կանցելարիայի հետ: Պետական տպարաններից կը քնան միայն չորսը. պետական, սենատի, պատերազմական միւստրութեան և հաղորդակցութիւնների միւստրութեան: «Полное» լրագիրը հաստատում է այն լուրը, որ քննող մասնաժողով է նշանակված Օրենսդրող երկրում արքունի հողեր բաժանելու մասին: Մասնաժողովին կը մասնակցեն Կախանով և Կովալէֆսկի:

Միագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

